

# ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷԶ<sup>1)</sup>

ՐՕԶԵԳԵՐԻ

Անցեալ անդամ կանդ առայ աղջկայ գալու վրայ, այն-

պէս չէ:

Նրա լուսանկարը կախուած է սեղանատանդ: Դու նրան  
«Միկստինեան մաղոննա» ես ասում, և ճիշտ որ Բարբելը մա-  
դոննա է, միայն առանց մանուկի: Քաղաքում այսպիսի անձ-  
նաւորութիւնը աներևակայելի է: Այնտեղ մարդկանց ազան  
հայեացքները կզրկէին նրան այս անընթանելի հրաշագեղութիւ-  
նից և վաղուց արդէն նրա անարատ և հպարտ հոգին ստո-  
րացրած կլինէին:

Ես հեռուից ակնածութեամբ նայում էի նրան, որը երեք  
շաբաթուայ ընթացքում երեսուն բառ անդամ չի ասել ինձ:  
Կարելի է արդեօք ալսպիսի ուրախագին և ցնծալի գեղեցկու-  
թեան տէր լինել և այսչափ լուրջ ու ինքն իր մէջ ամփո-  
փուած լինել: Միմիայն հիւանդ եղբօր հետ է հանացներ ա-  
նում, նրան փաղաքշում: Երբ Բարբելը եղբօր մօտ է լինում,  
նա նոյն իսկ իր ցաւն էլ է մոռանում, ծիծաղում և այնպիսի  
սիրով է նայում քրոջ երեսին, որ ինձ նոյն իսկ անախորժ է  
լինում տեսնել այդ: Երեկ նա չոքեց մահճակալի առաջ, շոյեց  
եղբօր հիւանդ ծեռքը և քաղցրութեամբ ասաց.

— Խեղճ ծեռք. առողջացիր շուտով: Մի լաւ բան կը ն-  
ծայեմ քեզ զորա համար:

— Իսկ գնդակը դուրս չի գալիս — հառաչեց երիտասարդը.

— Ուրեմն այդպէս էլ պէտք է: Մարդս այնքան ոսկորներ

<sup>1)</sup> Լուսայ 1909 Ա 2.

ունի, որ կարող է մի փոքրիկ կտոր արճեի ներկայութիւնն էլ տանել—կատակում էր նա:

—Բայց չէ՞ որ գնդակը մարմնի մէջ չպէտք է մնայ. մի առանձին օգուտ էլ չի կարող լինել նրանից:

—Մի վրդովուի, Ռօխերլ. ամեն մարդ մի անպէտք բան ունի իր մէջ: Մի վրդովուիր:

Եւ հիւանդի ցաւը աւելի թեթև երևալու համար պատմում է նրան մարդկալին զանազտն չարչտրանքների մասին:

Սակայն անցնենք ուրիշ գործերի: Օրերս, Տեառնընդառաջի տօնի օրը, բոլորեքեան ներկայ էինք հանդիսաւոր ժամերդութեան: Ուսուցիչը մոմք ծեռքին օդոնում էր քահանային: Այս մարդը մի բան ունի իմ դէմ: Բայց ի՞նչ: Երբ մեր հայեցքները հանդիպեցին իրար, ես բարևեցի, բայց նրա հայեցքը չփալեց սիրալիրութեամբ:

Տանտէրս ասում է, որ «չանասիրութեամբ եմ աղօթում»: Այն էլ ես, որ սովոր եմ երեկոները անցնել ուրախ, սոնձարձակ ընկերակցութեան մէջ, պանդոկում կամ սրճարանում: Այժմ ես նոյն ժամերին պարտաւոր եմ չոքել և դիւդացիների հետ միասին աղօթքներ մրմնչալ: Փորձիր պատկերացնել քեղ այս տեսարանը: Բայց ոչ, դու չես կարող այդ անել, չափաղանց աննախանձելի պատկեր է այդ: Հասարակ օրերը աղօթքը մօտաւորապէս քառասուն բոլէ է տևում. տօների նախընթաց երեկոները—համարեա ամբողջ ժամ: Եւ հաւանօրէն դորա համար կներուին ինձ իմ հին մեղքերս—իսկ նրանք քիչ չեն: Բայց ոչ աղօթքի կամ չոքելուս, այլ այն ոյժի, որ ես գործ եմ դնում ինձ խեղդող ծիծաղը զսպելու համար: Պատահե՞լ է քեզ լսել երբեկցէ թէ ինչպէս են աղօթում գիւղացիները: Իսկապէս այդ որթմնչոցի մէջ կոմիքական ոչինչ չկայ. բայց քաղաքացու նման թեթեամիտ և անհամբեր ոչոք չկալ:—Միմիալն հետզհետէ սկսեցի հասկանալ, որ հոգսերով ծանրաբեռնուած արս մարդիկ աղօթքի ժամանակ թեթեացնում են իրանց վիրաւոր սիրտը:

Երբեմն ամենքն էլ կատարում են «աղօթիր և աշխատիր» պատուիրանը բառի բուն նշանակութեամբ, իրագործելով թէ մէկը և թէ միւսը. միաժամանակ: Սաղմոս կարդալու միջոցին

հայրը ուղղում է չամը, մայրը կերակուր է պատրաստում, թարբելը մանում է, Ռոխերլը և Թրանցելը մաքրում են լորին, որ միւս օր նաշին եփած կմատուցանեն: Խոկ վարձուռը ։ Նա նոյնպէս նստած է թուրքի նման, մի որևէ էրան է շինում և աշխատում է ծածկել, որ լաւ չէ լիշում նոյն խոկ գհայր մեր» աղօթքի բառերը..»

Բարեպաշտութեանս համար ներւում է ինծ աշխատանքի անհմտութիւնը. սակայն ծերունին արդէն մի քանի անգամ բարեսրութեամբ լսնդիմանել է, որ երես չեմ խաչակնքում ոչ նաշից առաջ և ոչ յետոյ, որ պատառաքաղը ծախ ծեռքին եմ պահում, որ արդանակը ընդհանուր ամանից չեմ ուտում, այլ նախօրօք առանձին ափսէի մէջ եմ վերցնում, որ տօն և հասարակ օրերին միւնոյն զգեստն եմ կրում, որ ամեն օր սապնով եմ լուացւում և մինչեւ անդամ ատամներս խողանակով եմ մաքրում: Պառաւը աւելի խիստ է վերաբերւում:

— Լսիր, Հանա, — ասաց ինծ ար օրերս — դուքս վատ սովորութիւններով երեխաներիս կիչացնես. չէ որ նըանց վատ օրինակ ես տալիս: Եթէ երբեկցէ Թրանցելը այլպիսի ատամի խոզանակ ծեռք բերի, կարող ես քեզ համար ուրիշ տեղ որոնել: Ես չեմ կարող տանել այդ:

Ես չեմ ուղղում անբաւականութիւնների պատճառ դառնող և կարծում եմ որ առանց ատամի խողանակի էլ կարող եմ ապրել: Մերունին առաւետը ատամները մաքրում է շորով, մաղերը սանրում մատներով, խմելու. համար չուրը շրհորից հանում է գլխարկով, կամ ուղղակի խմում բռնից: Նրանց կտր ծիթով, ամեն ինչ ունին և ոչնչի պահասութիւն չեն զգում: Երբ գիւղացին կարիքի մասին խօսեց, դա նշան է որ սովից մեռնում է: Մարդս ոչ մի պահանջ չունի, թէ բնական դրութեան և թէ քաղաքակրթութեան ամենաբարձր աստիճանի վրա: Խոկ թէ ալդ երկու աստիճանների միջև ինչ է կատարւում: Աստուած հեռու պահէ: Բարեկիրթ մարդու ամեն մի ցանկութիւնը իրազործուելու վայրկեանին առաջ են գալիս մի դիւժին նոր ցանկութիւններ . և բոլոր ալդ ցանկութիւնները հնարաւորութիւն չեն տալիս նորան դուարճանալու:

Թիշում եմ որ երբեմն դրում էի թէ ցանկութիւնների բացակայութիւնը բարբարոսութեան նշան է և թէ որքան բարձր է քաղաքակրթութիւնը, այնքան շատ են ցանկութիւնները: Այժմ ես ալլ կերպ եմ մտածում: Նրանում չէ կայանում արդեօք բ'րձր քաղաքակրթութիւնը, որ մարդս դժուկ զուարճանալ և զրկանքներ չի զգում: որ նա կարողանում է այնպէս կարգաւորել իր ցանկութիւնները, որ առանց հօգու հանդստութիւնը կորցնելու և ոյժի չափազանց լարումի կարօղանում է բաւարարութիւն ստանար: Արուեստդիտութիւնից առաջացած անբնական ցանկութիւնները անբաւարարութիւն են առաջ բերում: Ինչու համար են մարդուս զանազան տպաւորութիւններ ընդունելու հազարաւոր զգայարաններ, զուարինութիւնների համար հազարաւոր սրտեր, երբ միշտ բաւական է երկուծեօք աշխատելու և մէկ սիրտ զուարճանարու համար: Կատարեալ մարդը ոչինչ չունի, սակայն ամեն ինչ նրան զուարճացնում է: Ով կարող է հանդստանալ ամեն մի դերանի կամ գետնի վրալ, ինչպէս գահաւորակի վրալ, նրա համար ամբողջ աշխարհը լիքն է գահաւորակներով: Ով աղբիւրի ջուրը խմում է նոյնպիսի բերկրանքով, ինչպէս և ամենարնտիր հօհանենսքերգեր, արդպիսի մարդու համար ամեն սարից բէլնվէն է բղխում:

Եւ այս ամենը քեզ ասում եմ ես—մի մարդ, որ ներկայ ըոսկին նոխութեամբ չէ շրջապատուած, այլ ծանր զրկանքներ է կրում: Երեկ, սարստիելի գիշեր անցնելով, մտաղրւում էի արդէն իրերս կապել և փախուստի զիմել, բայց երբ սոյն նպատակով մօտեցալ դրան, մտածեցի որ ալդ միշտ էլ կարելի է հեշտութեամբ անել: Կարող եմ գնալ հէնց այս ըստէիս, կամ մի ժամկից լիտոյ, վաղը, միւս օր: Եթէ ինձ ստիպէին մնալ, այս կեանքը ես չէի կարող տանել: Բայց ինքնալօժար կամքով, հասկանալով իմ աղատութիւնը— ալդուրիշ խնդիր է: Եւ ի՛ կապոցը դարձեալ պահարան գնաց: Հանաք բան չէ աշխատանքը:

ՀԱՅԱ

Խօթներորդ կիրակի

Ինչ ես անում դու գիշերուալ ժամը երեքին: Ենթադրում

Եմ որ ալդ ժամին տուն ես վերադառնում պարահանդէսից, կամ հիւրանոցում բելեարդ ես խաղում. եթէ ոչ պառկած ես լինում անկողնում և որև է յատնի հեղինակի մտքի արտադրութեան օգնութեամբ պատրաստում ես քաղցր քնելու. Իսկ ինձ ալդ ժամին տանտէրը փալտով բաղխում է պատը թէ ժամանակ է վերկենալու. Սկզբներում շատ տրագիքական կերպով էի վերաբերում դրան և այնպէս էի վերցատկում յարդէ անկողնից, կարծես հրդեհի լինեի շտապելիս. Այժմ թողնում եմ բարի Աղամին զարնելու երկու, երբեմն և երեք անդամ. Երեկ նոյն իսկ ծայն տուեց նա «Հանգել, արդէն վաղուց ժամանակ է վերկենալու».

Ժամացոյց չորսի քառորդն էր ցոյց տալիս:

Յրարին ամենեին ուշադրութիւն չեն դարձնում. Տաք արդանակ (գեղչկական սուրճ) տալիս են միմիայն Աղամի, պառաւի և Բարբելի հետ ամբողջ երեք ժամ վարսակ կալսելուց յիառի Ակդ աշխատանքը համեմատաբար աւելի թեթև է նախկին թղթակցիդ համար:

Բարբելը կարող էր գոռողութիւնը մի կողմը թողնել. ճըշմարիտ է ես խեղճ, եկուոր վարձկան եմ, բայց չէ՞ որ եթէ ինձ անունով կանչէր, անմիշապէս սէր չէի խոստովանի նրան Նկատում ես, որ գրիչս անընդհատ միւնոյն հարցին է դառնում: Միթէ վէպի սկիզբ է սա: Ի՞նչ կասես:

Դատարկ բաներ են, ժամը վեցին Ռոխերլը շուացնում է նախաճաշի հրաւիրելով մեզ: Որովհետեւ նա կալսել չի կարող, մեզ համար տանը սուրճ է պատրաստում. այսինքն բոված հատիկները եփում է շրի մէջ, աւելացնելով իւղ և չաման: Իսկական սուրճ երազում էլ չեն տեսել: Գուցէ դու կարծում ես թէ թարմ կաթ եմ ստանում այստեղ: Այդպէս չէ. էլի փառք Աստծու, եթէ մի ամբողջ շաբաթ ներքնատանը մնացած և երեսը քաշած կաթ տեսնեմ:

Նախաճաշից յետոյ ես գնում եմ եզների մօտ, Բարբելը կովերի, իսկ Ռոխերլը ոչխարների մօտ: Տաւարը կերպակում են օրը երկու անդամ. շրի համար տանում են շրհորը, որի երեսի սառուցը ծերը նախօրօք մաքրում է: Պառաւը կրտսեր որդուն դպրոց է ուղարկում: Այնուհետև մին-

չե ճաշ շարունակ կալսում ենք: Ճաշը բաղկացած է լինում՝ վերևությամբ կաթնով պատրաստած հայցի տրդանակից, մանրացրած կաղամբ նարսղից, հանարին նկանակից ապիստած մսով: Առողջարար կերակուր է. իսկ ինչ խոհարարական արհեստի է վերաբերում... բայց լաւ չէ մարդկանց ետևից բամբասել: Բոլորեքեան դանդաղ և համեստութեամբ դդալները իշեցնում են ընդհանուր ամանի մէջ. ոչ ոք չի աշխատում ուրիշից աւելի սահանալ: Ամեն տեղ գիւղացիների մէջ նկատել եմ այդ սովորութիւնը: Վաստ չէր լինի եթէ նրանցից օրինակ առնէինք:

Ճաշից յետոյ—դարձեալ կալսել, պէտք է մինչև պասը վերցացնել: Վարսակով տէրը կերակրում է խողերին, կամ ծախում, կամ թէ պահում. ապադալի համար: Երեկոյեան Բարբելը գնում է կովերի մօտ և փարախից լուռում է թէ ինչպէս է կոմքը թափւում կաթսալի մէջ: Երեկոյեան բոլորեքեան հաւաքւում են օզախի շուրջը և զանազան մանր աշխատանքներով զրադւում: Ես պէտք է նորոգեմ յարդէ աթօռների ոաները, ուղղեմ և սրեմ դանակները, կարեմ փոկը, կարգի բերեմ դռան կոթերը և այն: Ամաչում եմ անդորդ նստել, երբ միւսները աշխատում են: Առաջ, զինուորական ծառայութեանս ժամանակ, կամ խմբադրաստանը, ես երբէք չեմ ամաչել... Այնուհետև զալիս է ընթրիքը—գետնախնձոր, շաղգամ, ալիւրէ սպաս. յետոյ աղօթքը, իսկ ութը ժամին, երբ քաղաքի բնակիչները նոր են սկսում շարժուել, մենք պարկում ենք քնելու: Կիրակի օրերը, անասուններին կերակրելուց յետոյ ամենքը գնում են եկեղեցի, իսկ ես կամ շրջակալքումն եմ թափառում և կամ քեղ զրում:

Գեղջուկը աշխատանքի մէջ աղնիւ է, բայց առևսուրի մէջ, ինչպէս օրինակ անասունների վահառման ժամանակ, զիւղացիները (օրոնց թւում և իմ Աղամը) աշխատում են ամեն կերպ իրար խարել: Այս չպէտք է մեղ զարմացնէ, որովհետեւ ամեն տեղ էլ այդպէս է լինում: Իսկ զարմանալին ահա թէ ինչն է. սարի ծեր գիւղացիները չգիտեն թէ աշխարհիս երեսին ինչ է կատարում: Բայց և այնպէս չօյղենդօրֆի պանդոկում վիճաբանում են քաղաքական խնդիրների մասին: Օրինակ, ուռսները զալիս են մեղ վրայ, նրանք մեծ քաղաքները տանել չեն

կարող և ուզում են այրել այնպէս, ինչպէս երբեմն այրել են իրանց մայրաքաղաք Մոսկուան. հրէաներին կը շարդեն, իսկ նրանց փողերը կրածանեն աղքատ գիւղացիներին, Զինացիներին էլ կկոտորեն. նրանց մազերից Պրուսիալի կալսրը մտրակներ շինել կտալ յեղափոխականներին ծեծելու համար. Սակայն չուօմի պասլը արգելել է պատերազմել. Եթէ մի տէրութիւն պատերազմ յայտարարի, միւս բոլոր տէրութիւնները կմիանան նրա դէմ: Գիւղացիները սաստիկ ատում են «մեծ աւաղակ» Նապօլէօնին, իրանց ամբողջ լուսը Յովսէփ II կալսրն է, որ քնած է քարայրի մէջ և որ կարթնանայ երբ կեռասենին նոր տարութեան ժաղկի: Ալմգայի բնակիչները աւելի հետաքրքրւում են նոր գիւտերով և յայտնութիւններով: Հեռագրաթելը նրանք երեակալում են հասարակ զանգակի ծևով, եթէ զանգը Զալցրուրգում քաշեն, ձայնը Վեննայում կլսուի: Շանթարգելը մաղնիս է և կալծակները դէպի իրան է քաշում: Քաղաքներում կալծակները շանթարգելով քաշում են մի մեծ շինութեան մէջ, որից ստացւում է ելեքտրական ոյժը: Կան և արագընթաց գնացքներ, որոնք «կալծակ» են կոչում, նրանց կալծակները քաշում են իրանց ետևից, սրանք ելեքտրական գնացքներն են: Ամերիկայում շատ ոսկի կալ, քայլ ալնտեղ կարելի է գնալ միայն շոգենաւով: Շոգենաւերը երկաթից են, քայլ չեն խորասուզւում, որովհետև գոլորշին նրանց շրի երեսին է պահում: Ահա թէ ինչեր են անցնում մտքով, երբ ճեռքերն աշխատում են: Դէպի ունեորները մինչև ալժմ ոչ մի թշնամութիւն չեմ նկատել, թէպէտ և նրանց մասին շատ են խօսում:

Բայց քունս տանում է և հրաժեշտի փոխարէն «քարի առաւօտ» եմ յանկանում քեզ:

ՅՈՒ ՀԱՆՈ

Ութերորդ կիրակի

Ուրախ եմ, որ նամակներս բաւականութիւն են պատճառում քեզ: Գրում ես որ բաւական նոր և խրատական բաներ եմ հաղորդում, որ անկեղծ հետաքրքրութեամբ պատրաստ ես ամրող տարի լսել սրտիս զեղմունքը և խոստանում ես միշտ

հաւատարիմ ընկեր լինել ինձ։ Եթէ գիտենաս, բարեկամ, թէ որքան արխութիւն է տալիս ինձ այդ ամենը։ Տարազրի ղղացումը շատ սակաւ եմ զգում ալժմ, թէպէտ բարկութիւնս դէպի «Կոնտինենտալ փոստի» հրատարակիչը և աշխատակիցները աւելի և աւելի մեծանում է։ Բայց չէ՞ որ ոխն էլ ոյժէ։ Երևակայել ես երբեկցէ, որ ոխը, զայրովթը և ատելութիւնը աւելի շատ բարիք են ճնում քան սէրը։

Անցեալ շաբաթ մի ճանր օր անցրի։ Պէտք էր ճառ կրտրելու համար անտառ գնալ, որովհետև փայտերս քչացել էին։ Ուրբաթ օր էր, ծերը գնաց ջրաղաց, իսկ ես Բարբելի հետ պէտք է անտառ գնայի։ Ռոխերլը չի՞ ուղեկցի մեղ, հարցրի ես երկչոտութեամբ։

— Իսկ ինչի համար է պէտք ծեղ Ռոխերլը, կուզենայի իմանալ, — կտրուկ կերպով պատասխանեց մայրը — մենակ էլ լաւ կարող էք մի երկու ճառ կտրել։

Գնացինք։ Ես տանում էի կացինը, սեպը, իսկ աղջիկը — երկու կոթով լայն սղոց։ Զիւնը խորն էր, մինչև ճնկները մսնում էինք նրա մէց։ Ես գնում էի առաջից, Բարբելը ետեւից։ Ոչ մի խօսք չէինք ասում։ Մեր շորերը կպչում էին թփերին, որանցից ծիւնը թափւում էր երեսներիս։ Մառի վրայ կանչում էր չարթը։

Գնում ենք տափարակ տեղ, ուր կանգնած են ճառերի մերկ բները, որոնց գագաթները և ճիւղերը անցեալ ձմեռ կրտրել են չորացնելու համար։ Այսպիսի ճառերից մէկին մօտեցնում ենք սղոցը, ես բռնել եմ մէկ կոթից, նա միւսից։ Բայց գործը տուաշ չի գնում։ Նա բացատրում է թէ ինչպէս պէտք է բռնել սղոցը, ինչպէս սղոցել, բայց իդուր. պողպատէ ատամնաւոր ծողը տեղից չի շարժւում։ Փորձում եմ հանաքներ անել, բայց այդ էլ չի օդնում։ Նա մի անգամ էլ հանդարտութեամբ բացատրում է թէ ինչպէս պէտք է անել։

— Շատ հասարակ կերպով, — ասում է նա — փոքրիկ ֆրանցելի հետ ամենամեծ ճառեր էլ ենք կտրել. դու մի քիչ դանդաղ ես, չանզել, բայց ոյինչ։

Ոհ, ընկեր, ինչպէս ամաշում էի։ Մասնադիտական ուսումս,

նոյն իսկ ֆրանսիերէն լեզուն ուրախութեամբ կտայի միայն թէ սղոցել գիտենայի:

—Ամենեւին հարկաւոր էլ չէ այս անպիտան սղոցը — ասում եմ ես Կացնով էլ լաւ կկտրեմ ծառը:

Վսեմաշուք կերպով բարձրացնում եմ կացինը, ինչպէս հին դերմանացին Տևորուրգեան անտառում, և այնպիսի ոյժով զարնում ծառի բնին, որ Բարբելը պէտք է լետ թռչի, առ լապէս տաշեղները կդիպէն նրա երեսին, Թող տեսնի թէ ինչ պիսի նախնական մարդ է թաղնուած իմ մէջ:

Բայց յանկարծ չարաճնին սկսում է ծիծաղել: Նա ծիծաղում է ինչպէս արծաթէ զանդակը, եթէ միայն իհարկէ արծաթէ զանդակը կարող է ծիծաղել:

—Եթէ սպասելու լինենք, որ դու կացնով՝ վառարան վարելու համար փայտ կարես, չուրը կսառի կաթսայի մէջ, և մեր ըթերի տակ պաղլուլակներ կդրանան:

—Ինչ է որ, պատասխանեցի, ես արդէն վարժուել եմ ցրտին. կան մարդիկ, որոնք տաք վառարանի մօտ կարող են մարդիկ սառցնել:

Նա յուղուած նայում է ինձ, չգիտենալով ինչպէս բացատրել խօսքերս. իսկ ես հետզհետէ համոզւում եմ, որ սոնի ծառը դէպի միշուկը աւելի և աւելի է ամրապնդում:

—Մի անգամ էլ փորձենք սղոցել — առաջարկում է նա. դարձեալ երեսում է որ անկարող եմ այդ գործը կատարել...

—Գիտես ինչ, Հանդել, — յանկարծ ասում է նա — կարծում եմ որ աւելի լաւ կլինի թռողնենք այս և վերադառնանք տուն:

Խնդրում եմ, սիրելի բնկեր, ալրիր ալս նամակը:

Ցիշեալ անլաշողութիւնից յետով ամբողջ գիշեր և օրուայ կէսը անբաղդ էլ զդում ինձ: Սակայն բաւ է, աւելի լաւ է ուրիշ դէպքի մասին պատմեմ:

Առաւօտեան ծերունին մտաւ գոմը և բացականչեց.

—Հանդել, ալս ինչ է: Ռուտեղից է այս օտար անասունը փարախ մտել:

—Օտար անասուն, ինչպէս:

—Ահա այնտեղ մի խայտաբղէտ ցուլ է կանգնած: Տէր

Աստուած, ո՞ւր է մեր գեղին մողին։ Ո՞րտեղ է եղը, Հանդէլ։  
Լապտերը ծեռիս մօտեցայ և տեսայ բոլորովին օտար՝  
մէջքին ու բժերով մի մողի։

— Իսկ դեղին մողին անլալտացել է։ Երկար ժամանակ է տնտեսութեամբ եմ պարապում, բայց երբէք ալդպիսի բան ինձ չի պատահել։ Եթէ այսքան էլ չի կարելի քեզ վստահանալ, որ  
աչքիդ առաջիցդ կարող են անասուններ գողանալ...

Մերունին չվերշացրեց, չուղենալով վիրաւորել ինձ։ Յան-  
կարծ այդ վարկենին հասկացայ թէ բանն ինչումն էր։

— Փարախում, դուրս ցցուած տեղը թանաք եմ պահում,  
որ չսառի Երեխ գիշերը կատուն կամ մուկը շուռ են տուել  
դեղին ցուլի մէջքին։

— Ասում ես թանաք է այս, — ասաց Աղամք։ Յիմար  
բաներ մի ասի. ո՞րտեղից կարող է թանաքը փարախն ընկնել։

Արդէն ստիպուած էի խոսոովանուել, որ նամակներ եմ  
դրում։

— Նամակներ ես զրում։ Միթէ պառաւ մայր, կամ մի  
որև է մէկը ունիս։

— Տանտէր, ասացի ես, — ալժմ գնանք մողին լողացնենք,  
Ամբողջ առաւօտ լուսնում էինք մողին տաք շրով և  
մոխրաշրով, մինչեւ որ բժերը մաքրուեցան։

Թանաքն արգելուած է գիւղական ընտանիքներում։ Տպա-  
րանական թանաքի դէմ էլ հալածանք կալ։ Ասում են՝ աղքա-  
տութիւն և սով է տիրում այնտեղ, ուր սկսում են քիթը  
գրքերի մէջ կոխել...

Իններորդ կիրակի

Երեկ ճաշից լետոյ տանտիկինը պարզապէս հասկացրեց, որ  
կարող է ինձ արձակել։

Բայց ոչ թէ դեղին մողիները խայտաբղէտ դարձնելու հա-  
մար, այլ նրա համար որ միրուքս երկարացրել եմ։ Եթէ չեմ  
կարող քրիստոնեայի պէս օրինաւոր պահել ինձ, աւելի լաւ է  
ասեմ թէ որքան է հասնում ինձ մի քանի շաբաթուայ աշխա-  
տանքիս համար։ Արդէն զարուն է սկսում և հեշտութեամբ  
կարելի է ուրիշ տեղ գտնել։

Ուղում էի ասել թէ վարծատրութեան մասին խօսք չի կարող լինել: Եթէ ծրի հարկաւոր չէի, ի՞նչքան պէտք է վճարէի նրանց մօտ վարծուոր մնալու համար: Բերանս արդէն բացել էի, երբ յանկարծ սթափուեցի:— այդ խօսքերով միայն կասկած կարուցանէի և դործը աւելի կիչացնէի: Պէտք էր ստրուկի պէս հնազանդուել:

Եւ վարծուոր Հանգելը խոնարհութեամբ ասաց, թէ ոչ մկրատ ունի և ոչ էլ ածելի և թէ ոչ խուզել դիտէ և ոչ ածիլել: Եթէ երկար մաղերս դուր չեն գալիս տանտիկնոշ, թող ինքը պոկէ:

Նա ծիծաղեց. անկարելի է սրա վրայ բարկանալ. միշտ գուարճալի հանաքներ դիտէ անել: Հայր, երեկոյեան եթէ ազատ լինես, կարիք Հանգելի այդ բուրդը. ոչխարների և խոզերի մկրատով կարելի է այդ անել...

Լսում ես, փիլիսոփայ:

Երեկոյեան մարմնական պատժի ենթարկուեցալ: Յոլս ունեի, որ ծերի շնչարդելութիւնը կսկսուի, բայց իզուր: Պէտք է նստէի ցածր եռոտանու վրայ: Իմ գեղեցիկ, բարակ, շագանակագոյն մաղերը, որ դու անցեալները մինչև անգամ երգեցիր բանաստեղծութեանդ մէջ, շուտով ընկան բարբարոսի ոտերի մօտ: Պառաւը հաւաքեց և պահեց կտուրի տակ: Ասում են որ սա նշան է և սրանով մարդ լաւ լիշողութիւն է ունենում:

Հերթը հասաւ միրուքին. Ժանգոտուած մկրատը պոկում և չարչարում էր միրուքս, իսկ զլուխս ծերունին ամուր պահել էր իր ոսկրոտ ծնկների մէջ:

— Հանգել,— ասաց յանկարծ ծերը բեղերիս մի ծայրը բըռնելով,— ամառը, երբ հունձի ժամանակը գայ, կմնան մեղ մօտ: Ասա՛, չես գնա:

Հանգիսաւոր կերպով խոստացայ մնար:

— Լաւ, այդ դէպօւմ բեղերդ կթողնեմ:

Այսպէս ուրեմն միրուքովս երդուեցի, որ այս փորձառութիւնը մինչև վերջը կը տանեմ...

Երբ մաղերիս խուզելը վերչացաւ, բաց արի դէպի խրճթի

շերսը բացուող պատուհաններից մէկը, որի ապակու ետեր սև պատ կար: Այստեղի հայելին է սա: Եւ ես ինքս ինձանից վախեցայ: Զես կարող երևակայել թէ ինչի նման եմ դառել, երբէք չէի կարծի, որ գեղեցիկ միրուքս, այսպիսի զաղընի դէմք է ծածկում...

«Ա՛ քեղ բան, մտածեցի ես: Ի՞նչպէս երևամ այժմ նրան: Դէմքս այնպիսի լուսահատութիւն էր արտալայտում, որ հայրը վախեցաւ: Շոխերլլը զիլ ծիծաղեց.

— Մի ծիծաղէք, թողէք վերջացնեմ — ասաց ծերը: Այժմ պէտք է տեղը ողորկ դարձնել: Այն ժամանակ Հանզելը դարձեալ կդեղեցկանայ:

Եւ նա կրկին ծեռք առաւ ինձ: Երեսս սապնեց կոշտ սապնով և մինչև այդ շաղախը կցամաքէր՝ ածելին սրբեց կաշուէ անդրավարտիկի վրայ և առաջին անդամ իր պաշտօնը կատարող դահճի պէս, ահարկու վճռականութեամբ պատրաստուեց պատժել ինձ: Ուզում էի զոչել ամբողչ աշխարհին, որ անմեն եմ — բայց նա արդէն սկսել էր քերել: Միրուքս մաքրելով տեսաւ որ բեղերս էլ անհաւասար են, պէտք եղաւ այն էլ վերցնել: Այժմ արդէն կատարեալ աքսորականի նմանուեցի... նոր շղթաներ կապեցին ինձ զիւղական տարրի հետ — վասն զի այսպիսի դէմքով ի՞նչպէս վերադառնամ քաղաք...

Ալսօր, կիրակուայ տօնի պատճառով, առաւօտը չէին արթնացրել ինձ թրիսկովով: Սակայն տանակըս ինքը եկաւ մօտս:

— Ալդ լաւ է, Հանզել, որ հանգստանում ես, — ասաց նա — այսօր հանգստութեան օր է: Բայց պարտաւոր եմ ասել, որ լետոյ եկեղեցի պիտի գնասու ես պատասխանատու եմ բոլոր իմայինների համար — նրանց հաւատի համար: Աշխարհիս վրայ մենք միասին ենք ապրում, պէտք է որ երկնքումն էլ միասին լինենք: Ալսպէս չէ, Հանզել,

Ալդ ինձ դալրացրեց, ինչ դորձ ունի նա իմ դաւանանքի հետ: բայց միւնոյն ժամանակ էլ ուրախացրեց — թէպէտ և երկինքը ես ամենեին ալլ կերպ եմ երևակալում, քան Աղամի և նրա ընտանիքի մէջ լինելը: — ուրախացրեց այն պատճա-

ոռվ, որ հայրը լիրաւի խօսում էր ամբողջ ընտանիքի կողմից, որոնց թւում և կանանցից փոքրի կողմից:

Դորա համար էլ, ալսօր ես ոչ կանգնած և ոչ պառկած էի, այլ նստած էի եկեղեցու նստարանի վրայ:

Այնուհետև Ադամը հարցրեց զարմանքով— ալս ի՞նչ թըղթեր են: Նա բարձիս տակ նկատեց «Կոնտինենտալ փոստի» մի քանի համարները: Գիտե՞ս, Հանգել, դրանց վրայ անլարմար է պառկել: Լրագիրներ հօ չեն:

—Ոչ, ճշմարիտ որ չէ, խարեցի ես և վերմակով ծածկեցի թերթերը:

Իսկ ծերունին....

Բայց լապտերս հանգաւ:

Տասներորդ կիրակի

Սիրելի ընկեր.

Անցեալ անդամ գրեցի թէ ծերունին մօտս լրագիրներ տեսաւ:

—Միթէ լրադիր է այս.—ասաց նա վերմակի տակից թերթերը դուրս քաշելով:

—Ա՛յ քեզ բան: Վաղուց արդէն քո մէջ ինչ որ նկատում եմ. ալժմ հասկանալի է, որ կարգին խորհել չես կարող, քանի որ գլուխդ զանազան լիմար բաներով ես լցնում: Ուրիշ ոչնչից չեմ կարող դանդատուել. աշխատասէր ես, կենցաղավար ես, քչով բաւականացող: Ասենք մեզ մօտ չես էլ կարող քէֆ անել... բայց ամառը ալսաեղ սարերի վրայ ուրախ կլինի:

—Այո, ալո, ես էլ ուրախ եմ, որ ամառը մօտեցել է...

Նա շարունակեց. բայց եթէ լրագիրներ կարդաս... մեզ պէտք չէ ալդպիսի վարձուոր: Ուրախ եղիր, որ պատուաւոր դասակարգումն ես ծնուել, որ ոչ մի լարաբերութիւն չունի նման բաների հետ: Եթէ կարդալ ես ուզում, վերցրու Յիսուս Քրիստոսի կեանքի մասին գիրքը, սրբերի կենսագրութիւնը և կամ թէ աղօթզիրքը:

Այստեղ վարձուորը համեստութեամբ հարցրեց.

—Բայց ինչո՞ւ համար չէք սիրում լրագիրները:

— Մի՛թէ չդիտես, հանդել, որ բոլոր լրազրողները հեթանոսներ են, նոյնիսկ և հրէաներ:

— Լսել եմ, հայր, լսել եմ:

— Եւ որ լրազրիր գիւղացու համար թոյն է: Նավիր չօլղենդօրֆի Նանսինին: Նրա միակ գործը լրազրիր կարդալն է: Ճշմարիտ է միշտ մեղանից աւելի է զիտենում. զիտէ թէ ինչ է կատարւում Պրուսիայում և զիւղացիների մէջ... բայց իր տունը կառավարել չդիտէ: Լրազիրներում փառաբանուած դանաղան իրեր է գնում թանկ գներով. առաւ մինչև անգամ սերմացան գործիքը, կարծես թէ ծեռներ չուներ որ ցանէր... ուզում էր նոր մերենալով ցանել, բայց հատիկները արդէն հատել էին... դորանից լետոյ առաւ... և ծեր Աղամը սկսեց ծիծաղել.

— Ի՞նչ առաւ.

— Հա, հա. շատախօսի աեղ մի դնի ինձ, հանս, ուրիշներն էլ նոյնը կասեն: Գնեց պարարտանիւթ: Այն Նանսինը, որ կարող էր ուզածի չափ անսսուններ ունենալ: Բայց նա արուեստական պարարտանիւթ էր վողով առնում:

Որովհետեւ տեղից չեմ շարժւում, Աղամը կամաց կամաց մօտենում է անկողնիս:

— Մտածիր, հանդել, մի զիւղացի, որ պարարտութիւնը փողով է առնում:

— Ինչու չառնել.—ասացի ես — պաքարտութիւնը անհրաժեշտ է զիւղացու համար:

Ծերունին ալլես չպատասխանեց: Նախաճաշի ժամանակ պառաւը նկատում է, որ իմ և ծերունու միշն ինչոր պատահել է:

— Ճշմարիտ, հանդել, ասում է նա, քեզ կարելի է սիրել: Բայց հաւատ ընծայել քեզ չեմ կարող: Ինչոր ծածկում ես մարդկանցից: Ծածկիր որքան կամենաս, երեկի ոչինչ վատ բան չի լինի հողուղ մէջ. իսկ մինչև որ ոչ մի վատ բան չդիտենք քո մասին, կացի՞ր մեղ մօտ: Զգիտեմ որն է աւելի անհրաժեշտ միւսին—դու մեղ, թէ մենք քեզ:

Ահա քեզ զեղչկուհի:

Արգար են արդե՞օք նրանք. ինչ որ լինի նրանց կարծիք-ները հաստատ են և այդ ուրախացնում է ինձ. պատասխանի փոխարէն ես միայն ուսերս վեր քաշեցի: Տանտէրս պէտք է սուտ խօսէր. խոստացել էի, որ աղևս ինձ մօտ երբէք լրադիր-ներ չի տեսնի: Հոգենդորֆի ուսուցչի օգնութեամբ աւելի լաւ պէտք է գաղտնի պահեր. ինչպէս որ լինի գերունուն կապա-հովացնեմ, իսկ լրադրից զրկուելը ոժից վեր է: Աքսորանքի մէջ էլի քառասուներկու կիրակի պիտի անցնեմ: Նախկին ըն-կերակիցներիս հետ գաղարել եմ գրադրելուց և ամեն օր լրա-դիր կարդալով համոզւում եմ, որ հետզհետէ հեռանում եմ նրանցից: Բայց պէտք է զբոշ լինել: Որքան մեզանից հեռու-է լրադրական մասնութը, այնքան հակամէտ ենք հաւատալ նրանց: Ասենք նա ինքն էլ չի պահանջում, որ հաւատանք իրան: Պէտք է միայն կարդալ տողերի մէջ և այն ժամանակ կկարդաս այն, ինչ որ պէտք է: Գիտե՞ս, բարեկամ, ես ատում եմ ծեր աշ-խարհը: Բայց այդ առելութիւնը սիրոյ լատկանից է. հասկա-նում ես:

Առ այժմ թողնենք այդ և դառնանք խոնարհ ժառալիկ, որը ուզում է հին լրադիրները վառարան ածել, բայց մալրը վախենում է, որ ծուխ և վաս հոտ կկանգնի...

Պաս է: Բարեկենդանի մտախն մեղ մօտ խօսք էլ չի եղել, միայն Աղամը մի խող մորթեց: Ես օգնում էի նրան: Երբ մոր-թած կենդանու մաղերը մաքրում էինք, Աղամը հարցրեց. «գիտե՞ս, ձանզել, խողի պոչը ինչու է ոլորած: Զգիտե՞ս: Պատ-միր սորան, Ռոխերլ»:

Եւ Թօխերլը սկսեց պատմել. «Երբ հրէաները եղիպտոս էին, Փարաւոն կալսեր խողապանը ուզում էր խոճկորներ գցել նրանց նեղոս գետի վրայով և ալսպիսով դադունի առեւտուր ա-նել: Բայց նեղոսը լայն է և բոլոր խոճկորները ջուրն ընկան: Ե-կաւ սատանան և ասաց. «Խողարած, դու այդ չես կարող անել, խողերի պոչը պէտք է օդակի նման կապես, որ կարելի լինի բոնել նրանից»: Եւ վերցրեց խոճկորներից մէկն ու գցեց դէպի միւս ափը: Բայց Մովսէսը հրէաներին ասաց, ոչ, սիրելիներս, մենք չենք ուտի սատանակի ծեռքով մեղ ծգած միսը: Ահա թէ ինչու համար է խողերի պոչը ոլորած և թէ ինչ պատճառով հրէաները խողի միս չեն ուտում:

Անցեալ նամակում մատանջութեամբ հարցնում էիր թէ որպիսի ամպնեղէնի մէջ են ճաշ ուտում Աղամի տանեցիք և ուրիշ նման մանր բաներ: Փայտէ զդալներ և անօթներ ար-դէն վաղուց չեն գործածւում: Տանտէրս պահած ունի նախնի-

ներից մասած մի քանի ոսկրէ գդալներ և պատառաքաղներ։ Այժմ ուտում են եղիկորէ գդալներով, որոնք մեծ բերաններ են պահանջում և անքան էլ յարմար չեն թղթակցի համար, բայց շատ գեղեցիկ են և սադափի են նմանում։ Վերջին ժամանակները դրանք էլ փոխարինում են թիթեղեալ գդալներով։ Մարդ ճաշը պատրաստում է թիթեղեալ թաւանների և կաւէ ամանների մէջ։ Շատ կուղենար չուզունէ պղինձ ունենալ, բայց միշոցները չեն ներում։ Երբ ստանամ քսանեչորս հազար կրօնը, բոլոր ցանկովթիւններդ իրագործուած կիննեն, մալր Մաքրութեան ծարաւը երբեմն ուղղակի փորձանքի է հասցնում։ Երեկոները, երբ բոլորեքեան պարկում են քնելու, պառաւը դեռ ժամեր շարունակ մաքրում և լուանում է. իսկ շաբաթ օրերը սենեակ մտնել չի լինի։ Սեղանը, արկղները, տաշտակները, թաւանները—ամենն էլ շրով են ծածկուած, կարծես շրնեղեղի ժամանակ լինի։ միայն դանակները, գդալներն ու պատառաքաղները չեն լուանում, այլ ամեն անգամ գործածութիւնից յետոյ մաքրում են սփոցով։ Ներքնակներն անգամ եփում, խաշւում և թափ են տրուում հիմաւորապէս։ Թէ ինչի համար է ալդ, դու, միենոյն է, չես հասկանալ, ալպէս որ աւելի լաւ է իսկի մի էլ մտածի դորս մասին։

Այստեղ օրական հարցը— Լանգստագի ընտրութիւնն է։ Մինչև անգամ Աղամս էլ չկարողացաւ ընդհանուր յուղմունքից իրան հեռու պահել։ Այսօր ժամից վերադառնալով՝ ասաց։

—Քահանան խոստովանանքից պառաջ համոզում էր, որ քուէս մի որև է անիշխանականի, շրջմոլիկի կամ մի ինչ որ կարծեմ սոցիալ դեմոկրատի չտամ։ Ի՞նչ է նշանակում այս մենը, չանգել։

Սկսեցի բացատրել նրանց, թէ ինչ է նշանակում սոցիալ դեմոկրատ. մինչև իսկ խորհուրդ տուփ սոցիալ դեմոկրատին ծալն տալ. բայց չհասկացաւ ինձ։

—Այ թէ ի՞նչ կարելի է ալդպէս էլ է, միայն ես չեմ ըմբռնում ասածդ. իսկ քուէն մենք գեղջուկին կտանք։

Լաւ ենք, ինչ հարկաւոր է ասել, ես էլ, քահանան էլ։ Մէկս մէկ կողմն ենք քաշում ընտրողին, միւսը միւս կողմը։ Իսկ ո՞րն է մեզանից արդարը, եւ դեռ այս ազատ ընտրութիւն է կոչւում։

Թարգմ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՑ

(Կը շարունակուի)